վրայ վերցնո՞ւմ է պատասխանատուութիւնը այդ նամակ-բողոքի, որ ուղարկուած է ինձ, իբրեւ Անդրկովկասի բրիտանական զօրքերի հրամանատարի, թէ՞ այդ հանդիսանում է արտաքին գործոց նախարարի մասնաւոր մի քայլ»:

Ժորտանիա.— «Ի հարկէ, կառավարութիւնն իր վրայ է վերցնում ամբողջ պատասխանատուութիւնը արտաքին գործոց նախարարի քայլի համար»:

Զօր. Ուօկկեր.— «Այժմ ես թոյլ կը տամ ինձ ծանօթացնելու ձեզ Բաթումի ընդհանուր նահանգապետի նամակին (կարդում է նամակը, որի բովանդակութիւնը հետեւեալն է. զնդ. Գետեւանովը տեսակցութիւն է խնդրել ընդհանուր նահանգապետից ամսոյ 7-ին, շաբաթ, ժամը 10-ին առաւօտեան: Ընդհանուր նահանգապետը՝ գրաղուած խորհրդաժողովի նիստում՝ ցաւ յայտնեց, որ չի կարող ընդունել նրան, եւ յայտնեց, որ յաջորդ երկու օրը բանակցելու է եւ կը վերադառնայ միայն 10-ին, երբ մեծ հաճոյքով կ՝ընդունէ զնդ. Գետեւանովին: Չնայած դրան, գնդապետը եկել է յաջորդ օր, բայց, ի հարկէ, բացակայութեան պատճառով չէր կարող ընդունուել: Հէնց որ ընդհանուր նահանգապետը վերադարձաւ ճամբորդութիւնից, Գետեւանովն ընդունուեց ամենակարճ ժամանակամիջոցում»):

Ժորտանիա.— «Գնդ. Գետեւանովը հաղորդեց մեզ, որ երկու անգամ էլ, երբ ինքը գնացել է ընդհանուր նահանգապետին, վերջինս եղել է տանը, բայց մերժել է ընդունել: Բայց եթէ, ինչ որ երեւում է ձեր խօսքերից եւ ընդհանուր նահանգապետի նամակից, Գետեւանովը մեզ մոլորութեան մէջ է ձգել, նա կ՝ենթարկուի ամենախիստ պատասխանատուութեան»:

Զօր. Ուօկկեր.— «Ես պէտք է նկատեմ, որ նախ քան ինձ նման բողոք դրելը, կարելի էր սպասել աւելի ստոյգ պարզաբանութիւններ անգլիական հրամանատարութիւնից, որոնք անյապաղ կը ներկայացուէին վրաց կառավարութեան, քան թէ ձեր նամակին հիմք դնել զնդ. Գետեւանովի բացատրութիւնները: Ես գտնում եմ, որ ինձ, իբրեւ Մեծ Բրիտանիայի ներկայացուցչին, դրանով վիրաւորանք է հասցուած եւ իբրեւ դոհացում խնդրում եմ Բաթումի պաշտօնից հեռացնել զնդ. Գետեւանովին: Վրաստանի կառավարութեան տրում է կատարեալ եւ ամենալայն ապաստութիւն փոխարինելու մէկ ուրիշ յարմար նկատած անձով»:

Ժորտանիա.— «Քանի որ ընդհանուր նահանգապետը հաղորդում է իր իրական բացակայութեան մասին Բաթումից այդ օրերին, զօրավարի ցանկութիւնը, ի հարկէ, կը յարգուի»:

Զօր. Ուօկկեր.— «Ես հաւատացնում եմ ձեզ, որ Բաթումի ընդհանուր նահանգապետը բացակայ է եղել, ուստի եւ խնդրում եմ պաշտօնանկ անել զնդ. Գետեւանովին, իբրեւ մի անձ, որ մոլորութեան մէջ է ձգել իր կառավարութիւնը: Ես խնդրում եմ նոյնպէս այդ առթիւ ցաւակցութիւն յայտնել մամուլում: Ամսի 11-ին, «Բորբա»*) թերթում զետեղուած էր մի յօդուած զնդ. Գետեւանովի միջադէպի առթիւ՝ գրուած չափազանց խիստ արտայայտութիւններով. նրա մէջ խօսւում էր այն մասին, որ Վրաստանի կառավարութիւնը բաւարարութիւն է պահանջում անգլիական հրամանատարութիւնից»:

Ժորտանիա.— «Ի՞նչ խիստ արտայայտութիւնների մասին է խօսում զօրավարը»:

Զօր. Ուօկկեր.— «Ես պնդում եմ, որ ամբողջ նամակը գրուած է բաւական խիստ, իսկ որովհետեւ անգլիական հրամանատարութիւնը տակաւին տեղեկութիւն չունէր իմ չօշափած հարցի մասին, ուստի ես գտնում եմ, որ այդ չյսուած մի դէպք է միջազգային իրաւունքի շրջանում. մինչդեռ, «Բորբա» թերթում տպուած էր այդ յօդուածը, անկասկած, արտաքին գործոց նախարարութիւնից ստացուած տեղեկութիւնների հիման վրայ»:

Ժորտանիա.— «Կառավարութիւնն ունի միայն մէկ պաշտօնական թերթ. այդ՝ «Սաքարթվելոս Ռեսպուբլիկա»ն է, եւ պատասխանատու է միայն այն տեղեկութիւնների համար, որոնք տպւում են իր պաշտօնական բաժնում»:

Զօր. Ուօկկեր.— «Այդ բողոքի համար

---

*) Վրաց մենշեւիկների ռուսերէն պաշտօնաթերթը: Ս. Մ.